ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/53 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

(իրականացված հարցման կարգով)

Քաղ. Երևան 17 հունիսի 2020թ.

2020թ-ի մայիսի 26-ից հունիսի 17-ը տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/53** ծածկագրով (**Կամրջակային կռունկների փորձարկման համար ծանրաքաշ բեռների տեղափոխման ծառայություն**) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Թագայան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՆՆԱԲ-ի պետ.
Հ. Մելքոնյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՆԱ-ի պետ.
Լ. Օհանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Հաշվապահական ծառայությունների ավագ հաշվապահ.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային բաժնի պետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Արմինե Ավետիսյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Թագայանը, իսկ քարտուղարն էր՝ Արմինե Ավետիսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/53** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/53 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Թագայանը նիստը հայտարարեց բացված.

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով: ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ կետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	Յունիտրանս ՍՊԸ	ք. Երևան, Հանրապետության 22 տարածք 4	unitrans@netsys.am
2	Հիդրոէլեկտրամոնտաժ ՓԲԸ	ք. Երևան, Արցախի պողոտա, 4-րդ նրբ., 6	baboyan-gem@mail.ru

Հանձնաժողովն արձանագրեց, որ ստացվել է պատասխանատու ստորաբաժանման 2020 թվականի հունիսի 17-ի արձանագրությունը և զեկուցագիրն առ այն, որ ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվելիք գնման առարկայի պահանջը վերացել է, ինչի հիման վրա առկա է նաև ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին ՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ղեկավար մարմնի որոշումը: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը.

Որոշվեց՝

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/53 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/53 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թագայան

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Մելքոնյան

Լ. Օհանյան

Ա. Վարդապետյան

Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Ավետիսյան